Հեռախոս (+374 60) 710244
էլ.փոստ՝ meghryan@ysu.com

ՍԵՐԳԵՅ ԳՈՒՐԳԵՆԻ ՄԵՂՐՅԱՆ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սերգեյ Գուրգենի Մեղրյանը ծնվել է 1976 թ. փետրվարի 9-ին Երևան քաղաքում, մտավորականի ընտանիքում:

Միջնակարգ կրթությունը ստացել է Երևանի թիվ 150 ռուսական միջնակարգ դպրոցում:

1992 թվականին ընդունվել և 1997-ին գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:

1997 թվականին ընդունվել և 2000-ին ավարտել է ԵՊՀ ասպիրանտուրան՝ «Մասնավոր իրավունք» մասնագիտացմամբ:

1999, 2000 թթ. վերապատրաստվել է Կենտրոնական եվրոպական համալսարանի Սահմանադրական և իրավական քաղաքականության ինստիտուտում (Հունգարիա, Բուդապեշտ)՝ «Միջազգային առևտրային իրավունք» և «Առևտրային վեճերի լուծումը Առևտրի համաշխարհային կազմակերպության շրջանակներում և միջազգային առևտրային արբիտրաժ» ուղղությամբ:

2000 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ստացել իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2000-2006 թթ. աշխատել է ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնում որպես ասիստենտ:

2006 թվականին ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ ստացել է դոցենտի գիտական կոչում՝ իրավագիտություն մասնագիտությամբ:

2006-2007 թթ. աշխատել է ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնում որպես դոցենտ:

2007 թվականից առ այսօր աշխատում է ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնում որպես ամբիոնի վարիչ:

1999-2004 թթ. համատեղության կարգով ԵՊՀ-ում աշխատել է որպես ուսանողական իրավաբանական խորհրդատվության (իրավաբանական կլինիկայի) դասախոս-կոորդինատոր:

2003-2004 թթ. համատեղության կարգով զբաղեցրել է «Գրիգոր Զոհրապ» համալսարանի ռեկտորի պաշտոնը:

2002-2009 թթ. համատեղության կարգով կատարել է «Գրանդ Քենդի» հայ-կանադական ՀՁ ՍՊԸ իրավաբանական բաժնի պետի պարտականությունները:

2015-2017 թթ. դասավանդել է «Հայաստանի Հանրապետության դատական դպրոց» ՊՈԱԿ-ում, Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոցում, Հայաստանի Հանրապետության արդարադատության ակադեմիայում:

1998 թվականից Հայաստանի Հանրապետության իրավաբանների միության անդամ է:

2005 թվականից ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի անդամ է:
2015 թվականից ԵՊՀ գիտական խորհրդի անդամ է:
2015 թվականից Հայաստանի Հանրապետության փաստաբանական պալատի անդամ է:
2015-2018 թթ. հանդիսացել է Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի գնահատման հանձնաժողովի անդամ:

2016-2018 թթ. մասնակցել է Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի հայեցակարգի, իսկ ապա նաև Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի նախագծի մշակմանը և համակարգել է աշխատանքային խմբերի գործունեությունը:

2012-2018 թթ. մասնակցել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծի մշակմանը և համակարգել է աշխատանքային խմբի գործունեությունը:

2013 թ. պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Ոսկե հուշամեդալ»-ով կրթության և գիտության ոլորտում ներդրված մեծագույն ավանդի համար:

Ուսումնամանկավարժական և պրակտիկ գործունեությանը զուգընթաց զբաղվում է գիտահետազոտական աշխատանքով: Համահեղինակ է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք» բուհական դասագրքի, հեղինակ է մեկ մենագրության և 50-ից ավելի ուսումնական ձեռնարկների և գիտական հոդվածների:

Որևէ կուսակցության անդամ չէ:

Ամուսնացած է: Ունի երկու դուստր: